ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, 209-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոցի հ. 33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքից (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 02.03.2010թ. հ.2277777 վկայական) «Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 225.2 քմ մակերեսով նկուղային տարածքը և 1-ին հարկի 106.6 քմ մակերեսով հատվածը (կաթսայատան համար նախատեսված մասը) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված ոչ բնակելի տարածքի օտարման արդյունքում «Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն է անցնում Երևան համայնքի սեփականություն համարվող, Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանով և կաթսայատնով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքից «Գրիար-Սպասարկում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված 225.2 քմ մակերեսով նկուղային տարածքը և 1-ին հարկի 106.6 քմ մակերեսով հատվածը (կաթսայատան համար նախատեսված մասը) սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Բուզանդի փողոցի հ. 33/2 հասցեում գտնվող էլեկտրաենթակայանի և կաթսայատան շենքի 225.2 քմ մակերեսով նկուղային տարածքը և 1-ին հարկի 106.6 քմ մակերեսով հատվածը (կաթսայատան համար նախատեսված մասը) համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 02.03.2010թ. հ.2277777 վկայականի տվյալների՝ հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Երևանի քաղաքապետի 03.07.2006թ. հ.1069-Ա որոշմամբ Բուզանդի փողոցի հարող տարածքում էլեկտրաենթակայան կառուցելու նպատակով «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հատկացվել է 300.0 քմ մակերեսով հողամաս: Որոշմամբ սահմանվել է, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո հողամասի հողօգտագործող պետք է ճանաչել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին և գույքն անհատույց հանձնել ընկերությանը՝ շահագործման իրավունքով:

«Գրիար» ՓԲԸ-ն 2008 թվականին դիմել է Երևանի քաղաքապետարան, խնդրելով վերոնշյալ 300,0 քմ մակերեսով հողամասում էլեկտրաենթակայանից բացի կառուցել նաև կաթսայատուն և հայտնել է իր պատրաստակամությունը կառույցների նախագծման, նախագծերի փորձաքննության, շինմոնտաժային աշխատանքների, հեղինակային հսկողության, տեխնիկական հսկողության և աշխատանքների ավարտից հետո նաև ավարտական ակտերի համար նախատեսված տեղական տուրքերի ֆինանսական ծախսերը ընկերության միջոցների հաշվին իրականացնելու հարցում, որը Երևանի քաղաքապետի 08.12.2008թ. հ.5793-Ա որոշմամբ բավարարվել է:

«Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և «Գրիար» ՓԲԸ-ի միջև կնքվել է նախագծային աշխատանքների կատարման, կապալի աշխատանքների կատարման, հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրեր: Պայմանագրային պարտավորությունները ընկերության կողմից կատարվել են և հանձնման-ընդունման ակտով հանձնվել են «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին և գույքի նկատմամբ գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Երևանի քաղաքապետի 16.07.2010թ. հ. 3172-Ա որոշմամբ՝ Բուզանդի փողոցի թիվ 33/2 հասցեում գտնվող 225.2 քմ մակերեսով նկուղը և 1-ին հարկի 106.6 քմ մակերեսով հատվածը (կաթսայատան համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է «Գրիար» ՓԲԸ-ին՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու նպատակով, իսկ 1-ին հարկի 46.5 քմ, 27.7 քմ և 8.7 քմ մակերեսներով հատվածները (Էլեկտրաենթակայանի համար նախատեսված մաս) մակերեսներով տարածքներն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու նպատակով։

Հետագայում Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի հունիսի 26-ի հ. 469-Ա որոշմամբ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված հատվածները սեփականության իրավունքով անհատույց օտարվել է /նվիրվել/ ընկերությանը։

Երևանի քաղաքապետի 25.01.2011թ. հ. 187-Ա որոշմամբ դադարեցվել է «Գրիար» ՓԲԸ-ի անհատույց օգտագործման իրավունքը Բուզանդի փողոցի թիվ 33/2 հասցեում գտնվող 225.2 քմ մակերեսով նկուղի և 1-ին հարկի 106.6 քմ մակերեսով հատվածի (կաթսայատան համար նախատեսված մասը) նկատմամբ և այն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է «Գրիար-Սպասարկում» ՍՊԸ-ին։

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաթսայատունը և էլեկտրաենթակայանը կառուցվել են «Գրիար» ՓԲԸ-ի միջոցների հաշվին, և փաստորեն կաթսայատան սպասարկումը, վերանորոգումը, շահագործումը և անհրաժեշտության դեպքում սարքավորումների փոխարինումը ամբողջությամբ պետք է կատարի ընկերությունը, ինչպես նաև այն, որ կաթսայատունը սպասարկում է Ամիրյան փողոցի մի շարք բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերը՝ ապա նպատակահարմար է գտնվել փոխանցել գույքը այն շահագործող կազմակերպության տնօրինությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ Հ.33/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Բուզանդի փողոցի հ.33/2 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ